Աստված փրկիչ ու պահապան բոլորիս. մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորանքի խոսքը Սուրբ Հարության տոնի առթիվ

17.04.2022

Արմավիրի մարզի սիրելի բնակիչներ, հարգելի հայրենակիցներ, Հայ Առաքելական եկեղեցին այսօր իր հավատավոր զավակների հետ տոնում է Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կամ Սուրբ Զատիկը:

Եկեղեցին Հիսուսի Հարությունը տոնում է որպես Զատիկ, քանի որ նա համարվում է հավիտենական այն զոհը կամ պատարագը, որի միջոցով մարդը ստանում է մեղքերի թողություն, ապա՝ կյանք և հարություն:

Այս տոնը Տիրոջ հաղթանակն է ոչ միայն մահվան, այլև չարի նկատմամբ, քանի որ Աստծո Որդին մարդացավ և որպես մարդ՝ իր աստվածային զորությամբ մերժեց մեղքն ու չարիքը:

Եվ հենց այս հավատամքով և օրվա խորհրդով ցանկանում եմ, որ Աստծո Սուրբ օրհնությունը սփռվի ամենուր՝ մաքրագործելով մարդկային բոլոր մեղքերն ու հոգու արատները: Թող աստվածային լույսով լցվի մեր միտքն ու հոգին:

Չմոռանանք նաև, որ այսօր ուրախության տոն է: Աղոթենք ու մաղթենք միմյանց հույս, հավատ ու սեր: Աստված փրկիչ ու պահապան բոլորիս:

«Քրիստոս Հարյավ ի մեռելոց
Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի»: